ՎԱՇԻՐԱՄ ԴԱՐՅԱՆ

ԱԼՊԻՆԻԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 1938

796.52 1539
Ղ-36 Ղազարեան Ա.
Սպորտային դասընթաց
Հատ. 1838

5.VI		4/	275

Կ96·52
Ղ-26

Վ. ԳՈՐՅՈՆ

ՄԱՍՏԱՎԱՐ է 1961 թ.

ԱԼՊԻՆԻԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա II/20743 · Ա539

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏԱԿՈՒՎԱՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆ 1988 թ.

ՉԿԱ ԱՅՆՊԻՍԻ ԱՄՐՈՑ, ՎՈՐ ՉԿԱՐՈՂԱՆԱՆ ԳՐԱՎԵԼ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ

Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա «Ալպինիզմը Հայաստանում» աշխատությունը գրվել է ՀԱՄԿՄ-ի Հայաստանի եռքսկուրսիոն-տուրիստական վարչության հանձնարարությամբ՝ ալպինիստների կոնֆերանսում զեկուցում կարդալու կապակցությամբ։

Սակայն հետագայում նկատի ունենալով ալպինիզմի վերաբերյալ գրականության բացակայությունը և այն մեծ պահանջը, որ առաջադրվում է մեր յերիտասարդության կողմից զեպի ալպինիզմը, նպատակահարմար համարեցինք տպագրության հանձնել այն առանձին գրքույկով։

Վ. ԴԱՐՅԱՆ

ՈՎ ՉԻ ՇՓՈԹՎՈՒՄ ՁՑՈՒՆԱՊԱՏ ԼԵՌՆԵՐՈՒՄ, ՆԱ ՉԻ
ՅԵՐԿՆՉԻ ՆԱՅԵՎ ՄԱՐՏՈՒՄ

I.

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Խորհրդային ժողովուրդը սիրում և ապրում է։ Մեր յերկրում աճում ու բարգավաճում և ուժեղների և համարձակների մի նոր սերունդ, լի սոցիալիստական վառ հայրենասիրությամբ, պատրաստ ստեղծագործական աշխատանքի և տոգորված մեր սքանչելի խորհրդային հայրենիքի պաշտպանության բարձր գիտակցությամբ։

Կոմունիստական կուսակցությունը, խորհրդային իշխանությունը և ընկեր Ստալինը բացառիկ ուշադրություն են հատկացնում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը։

Մեր յերկրում սպորտով զբաղվում են միլիոնավոր յերիտասարդ մարդիկ։ Մեր լավագույն մարզիկները, հրաձիգները, վազողները, ֆուտբոլիստները և ծանրություն բարձրացնողները ամբողջ յերկրի պարծանքն են հանդիսանում։

Ֆիզկուլտուրայի և սպորտի այդ ձեվերի մեջ իր յուրահատուկ տեղն ունի նաև լեռնային տուրիզմը-ալպինիզմը։ Ալպինիզմը սպորտի ամենակատարելագործված ձևերից մեկը լինելով, իր պատվավոր տեղն ունի խորհրդային սպորտի մեջ։ Նա ամրանդակում է մարդու բազմակողմանի զարգացմանը՝ զարգացնում է նրա մեջ ֆիզիկական ուժ, ճարպկություն, յերևույթների ճիշտ ըմբռնողություն,

լեռնային վատ պայմաններում կողմնորոշվելու ընդունակություն, համարձակություն ընդհանրապես, կոլեկտիվ զգացում և այլն։

Ալպինիզմն առանձնահատուկ նշանակություն ունի նաև մեր յերկրի ընդհանուր, մասնավորապես լեռնային սահմանների պաշտպանության գործում։ Ալպինիզմը զարգացնում է և աճեցնում մեր յերկրում մարզիկների և համարձակների յուրաքանչյուր սերունդ, որոնց ժառանգները դարձյալ հայտնի են խորհրդային աշխարհին։

Ահա նրանք։

ՊԱՄԻՐԻ՝ 1932 թվի հայտնի եքսպեդիցիայի մասնակիցներ՝ վարպետավոր ալպինիստներ, ակադեմիկոս Գարբունովը, Աբալակովը, որոնք Խորհրդային միության մեջ առաջին անգամ բարձրացել են Պամիրի լեռնաշղթայի վրա, Ստալինի լեռնագագաթը, որի վերևը կապված է

հակայական դժվարություններին հետ, ալպինիզմի վարպետ Բարխաշը և վերջապես Վրաստանում ալպինիզմի վարպետները՝ Գվալիան, Զափարիձեն և մյուսները։

Նման խիզախ ալպինիստների բազմաթիվ անուններ կարելի է հիշատակել։

Այժմ խորհրդային միության մեջ մենք ունենք մոտ 9 հազար հոգի «ՄՍՀՄ ալպինիստ»-ի առաջին աստիճանի և 60 հոգի յերկրորդ աստիճանի կրծքանշան ունեցողներ։

Միայն 1937 թվի ընթացքում նախատեսված եյին ալպինիստների մասսայական մի շարք արշավներ դեպի Կովկասի, Տյան-Շանի, Ալթայի, Սայանյան լեռների յերկնամերձ գագաթները, և կազմակերպվեց մի եքսպեդիցիա ամենադժվար մարշրուտով դեպի Ստալինի լեռնագագաթը Պամիրի խորքում, 7495 մետր ծովի մակերևույթից բարձր։

Այս եքսպեդիցիային մասնակցում էին ամենափորձված ալպինիստները, 2-րդ աստիճանի ալպինիստական կրծքանշան ունեցողները, որոնք բարձրալեռ արշավների մեծ փորձ ունեին։ Այդ արշավը հաջողությամբ ավարտվեց։

Այժմ արդեն ալպինիզմը դարձել է մեր յերիտասարդության և աշխատավորների ամենասիրելի սպորտը։ Ամեն տարի հարյուրավոր ալպինիստներ բարձրանում են

Կովկասյան լեռնաշղթայի անմատչելի գագաթները՝ Ելբրուս, Կազբեկ, Ուժբա, Դիխտաու, Թեթնուլդ և Սվանեթիայի այլ լեռնագագաթներ։ Բազմաթիվ ալպինիստներ ամառն անց են կացնում մեր լեռնային ալպինիստական ճամբարներում՝ Տեգենեգլի, Ադիրսու և այլն։

Այժմ Խորհրդային Հայաստանում մենք ունենք մոտ 20 հոգի «ԽՍՀՄ ալպինիստ»-ի պատվավոր կրծքանշան կրողներ և մի քանի հարյուր հոգի հանրապետական ալպինիստներ։

վերանք բարձրացել են մեր լեռները— Արագած, Հագիա, Մայմեխ, Ազմատան և այլն։

Կոլտնտեսական ունեվոր կյանքին զուգընթաց, մեր աշխատավորության նյութական բարեկեցիկ կյանքի ստեղծման հետ միաժամանակ, սկսեցին խտանալ նաև Հայաստանի ալպինիստների շարքերը և ալպինիստական շարժումն ընդունեց մասսայական բնույթ։

Այժմ միանգամայն լուրջ կերպով դրվում է ալպինիստական կադրերի քաղաքական զատիարակության և ալպինիզմին տիրապետելու խնդիրը։

Մեր ալպինիստական արշավները ամեն ժամանակ պետք է պարզ նպատակադրում ունենան, վերջակետի դրական արդյունքների հասնենք։ Մեր ալպինիստական կամ ավելի ճիշտ կլինի ասել լեռնային արշավները չպետք է վերածվեն լեռներում կատարվող զբոսանքի կամ սովորական ճամբորդության։

II.

ԻՆՉ Է ԱԼՊԻՆԻԶՄԸ

Ալպինիզմը փոչ միայն լեռնային ապրում է կոնկրետական ապրում լեռներում, այլ նաև գիտական ուսումնասիրություն է՝ բարձր լեռնային շրջապատում։

Խորհրդային ալպինիզմի նպատակը փոչ միայն ապրումային է, ինչպես որինակ՝ զարգացնել բարձրանալու դիմադրությունը և սանիտարական ապրում և այլն, այլ նա հետապնդում է նաև գիտական և գործնական մի շարք կարևոր խնդիրներ։

Լեռների ուսումնասիրությունը յերկրաբանական, բուսաբանական և կենդանաբանական տեսակետից, սառցադաշտերի ուսումնասիրությունը, բարձր լեռնային ողերևույթաբանական յերևույթների ուսումնասիրությունը, քարտեզներ կազմելը-ահա թե ինչպիսի գիտական և գործնական խնդիրներ է հետապնդում խորհրդային ալպինիզմը։

Ահա «աշխարհի տանիքը» համարվող՝ յերկար տարիների ընթացքում անմատչելի Պամիրը։ Տարեց-տարի ավելի ու ավելի բարձրանում է վարագույրը գեղեցիկ այս առեղծվածային յերկիրը։ Քայլ առ քայլ մուտք են գործում այնտեղ խորհրդային մարդիկ։ Ընության տարերքը սանձահարող ալպինիստները և հետազոտողները։

Նրանք քարտեզի վրա յեն անցկացնում մինչև այժմ անհայտ գետակները, վտակները, նույնիսկ գետերն ու լեռները, նվաճում յեն թարկում են իրենց բարձունքները, ուր մարդկային վոտքը չեր կպել և այդ վայրերի հարուստ ընդերքն ի սպասին գնում սոցիալիստական շինարարության։

Այնտեղ, վորտեղ բեռնված ուղտերը խեղդվում եյին լեռները բարձրանալիս ձյան փոթո-

բիկներից, որտեղ մարդիկ լեռնային հիվանդությամբ բռնված հետո եյին մնում քարափներից, այդ նույն վայրերով այսօր սլանում են ավտոներ, որոնք կուլտուրայնն մացնում լեռնային Բադեշխանի խուլ ու խավար կիրճերում։ Ցեմ գոչ միայն Բադեշխանում։ Խորհրդային Տաճիկստանի ալպինիստները մեծ գործ են կատարել։

Տաճիկստանը, որը մի ժամանակ ապիտակ բիծ եր քարտեզի վրա, մոռացված մի լեռնային յերկիր, իր սեփական իշխաններով ու ցարական չինովնիկների ծաղրին ու ճնշմանը յենթակա, խղճուկ հովվական կենցաղով, գողերմելի դշլաղներով, այժմ անճանաչելիորեն փոխվել է։

Ամեն տարի բազմաթիվ ալպինիստական եքսպեդիցիաներ միշտ նորանոր ճանապարհներ են բաց անում, նորանոր լեռնագագաթներ հայտնաբերում, հովիտներ, գետեր, ամայի տարածություններ անվանակոչում և քարտեզի

գրայի նախկին ապիտակ բծերը գծագրում, լցնում նույն բանը կատարվում է նաև Կովկասյան լեռնաշղթայի, Սվանեթիայի լեռների և վերջապես Խրիմյան Հայաստանում՝ Արագածի վերաբերմամբ։

Ահա՝ թե ինչպիսի խոշոր գիտական նշանակություն ունի ալպինիզմը մեր յերկրում։ Սակայն չպետք է մոռանալ, որ բարձր լեռներ բարձրանալը կապված է մեծ դժվարությունների և կյանքը վտանգի յենթարկելու հետ։

Այդ է պատճառը, որ ալպինիստից պահանջվում է ուժերի մեծ լարում, գիմացկունություն, (առանձնապես սրտի անոթային սիստեմի), վճռականություն, ճարպկություն և անվախություն։ Ահա թե ինչու ալպինիստից պահանջվում է նախնական լուրջ մարզում (արենիրովկա), ալպինիստական տեխնիկայի տեսական և գործնական հիմնական ծանոթություն։ Մի շարք լեռներում (Վրաստանի լեռները, Կովկասյան լեռնաշղթան, Պամիրը) դագաթների նվաճումն այնքան բարդ տեխնիկա և վարժվածություն է պահանջում, որ նույնիսկ հաճախ փորձված ալպինիստներն անգամ տեղանքին լավ ծանոթ ուղեկցողներ պիտի ունենան։ Անգամ Հայաստանի լեռներում այդ պահանջը հաճախ զգացվում է, և այդ տեսակետից պետք է լուրջ նախապատրաստված լինի յուրաքանչյուր լեռնային արշավ։

Պետք է մոռանալ, որ Հայաստանի ալպինիստական կադրերը յերիտասարդ են և դեռևս լավ ծանոթ չեն լեռնային տեխնիկային, մեր յերկրին, մեր լեռների առանձնահատկություններին։ Մեզ մոտ ալպինիզմի ուղղությամբ մինչև այժմ կատարված աշխատանքը անբավարար է։

Եթե մենք վերցնելու լինենք բոլոր այն դժբախտ դեպքերը, որոնք տեղի են ունեցել լեռներում 1932-35 թվականներին, ոչ միայն մեզ մոտ՝ հայաստանում, (ինչպես 1935 թվի Արագածի դժբախտ դեպքը), այլ նաև խորհրդային միության մյուս հանրապետություններում, ապա կտեսնենք, որ նրանց մեծամասնությունը տեղի են ունեցել սկսնակ ալպինիստների հետ, որոնք չեն իմացել լեռներ բարձրանալու տեխնիկան, կամ վատ են տիրապետել այդ տեխնիկային կամ չեն իմացել լեռներում շարժվելու և գործելու պայմանները։ Առհասարակ մեզ մոտ լեռներ բարձրանալու կանոնների ժողովրդականացումը միշտ հետ է մնացել այդ շարժման ընթացքից։

Մի ուրիշ խնդիր, որը կազմում է ալպինիզմի առանցքային, եյական հարցերից մեկը՝ դա նրա ռազմական նշանակությունն է, մեր յերկրի պաշտպանության խնդրում։

Խորհրդային ալպինիստը գնում է լեռները ոչ միայն վայելելու բնության սքանչելի լեռնային գեղեցկությունը, այլ նա գիտակցում է նաև այն խոշոր պարտականությունը, որը ընկնում է համեն մի խորհրդային քաղաքացու վրա, որի արտում վառվում է պրոլետարական վառ հայրենասիրության զգացմունքը՝ յերկրի պաշտպանության կարևոր գործն ամուր հիմքերի վրա դնելու տեսակետից։ Ալպինիզմի ռազմական նշանակությունը շատ մեծ է։

Ահա հանդարտական ռազմագետ Զանտը, որը գրում է։ «1919 թվի ձմռանը Կարպատյան լեռներում տեղի ունեցած մարտերում ռուսական զորքերը խայտառակ կերպով ջախջախվեցին այն պատճառով, որ նրանք ժամանակ չունեին

A II 20748 1539

17

լեռնային տուրիզմին», հետևաբար նաև լեռնային ճանապարհների պայմաններին և լեռներում գործելու առանձնահատկություններին։ Բուրժուական մի շարք յերկրների բանակներում լուրջ ուշադրություն է դարձվում այս խնդրի վրա և այնտեղ գործում են ռազմական լեռնային հատուկ կանոնագրքեր, որով վարժեցնում են նրանք իրենց զորքերը լեռներում գործելու, պատերազմելու տեխնիկային։ Օրինակ՝ Ֆրանսիայում կա հատուկ կանոնագիրք «Ուղեցույց լեռներում գործող խոշոր զորական միավորներին»։ Այս կանոնագրքի մեջ բուրժուական ռազմագետներն ամփոփել են Եվրոպայի հարավում և արևմուտքում յոլն չափով զարգացած լեռնային ռազմի փորձը, ուր հաշվի յեն առնված բարձրալեռ վայրերում բոլոր այն խնդիրները, որոնք կապող են ծագել մեր զորական ստորաբաժանումների գործողությունների ժամանակ։ Այնտեղ հաշվի յեն առնված նաև Ֆրանսիան բանակի ալպիական հրաձիգների գնդերի գործողությունների փորձը, գրված պարզ և սեղմ, ռազմական կանոնագրքի լեզվով։ Այդպիսի կանոնագրքեր կան նաև բուրժուական մի շարք այլ բանակներում։

Բուրժուական ռազմագիտությունը ալպինիզմը հնարելու և ստեղծելու բանվոր դասակարգը, թնդանոթի մեջ դարձնելու նրան, քողարկելով իր պատերազմները բուրժուական հայրենիքի պաշտպանության կեղծ լոզունգների տակ։

Շատ հետաքրքիր է, թե ինչպես Ֆրանսիական գրող Սելինի՝ «Путешествие на край ночи» հայտնի վեպի հերոսներից մեկը, դառնությամբ խոսում է այն ամենատոր ցինիզմի մասին, որով բուրժուական ագիտացիա յե

անում ժողովրդին պաշտպանելու կապիտալիստական հայրենիքը։

—ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ ԹՇԴԱՆՈՒԹԻ ՄԻՍ ԵՆՔ, ՀԵՐՈՄՆԵՐԸ ԽՈՍՈՂ ԿԱՊԻԿՆԵՐ։— ահա այն բառերը, զորանցից մարդ ցավ է զգում։։։ Նրանք ծածկում են ցիլինդր և սկսում են պերճորեն շշմեցնել մեզ.

«Արիկաներ։ պատերազմն սկսվել է։ Մենք կհասնենք մինչև № 2 հայրենիքի անդզամները և կվոշնչացնենք նրանց։ Ա՞ռաջ։ Առաջ։։։ ապա, խմբովին։ Ապա, դեռ սկզբում այնպես աղաղակենք, զոր ամեն ինչ դողդոջա։ կեցցե՛ № 1 հայրենիքը։ Վորպեսզի ձեր ձայնը լավի ամեն ուրեք։ Նա, ով բոլորից բարձր կգոռա, կատանա շքանշան և քրեատոսի նվերը։ Սատանան տանի ։։։»։

Այսպես է կապիտալիստական յերկրներում, որտեղ մարդը գնահատվում է միայն որպես ապրանք, ճզմվում և արհամարհվում է աշխատանքի մարդը։ Որտեղ իշխում են ֆաշիստական մարդատյաց գաղափարները։

Հայրենի՛ք։ Այս բառն առանձնապես թանկագին և հարազատ դարձել մեզ յերկրի յուրաքանչյուր աշխատավորի համար։ Մեծ Հոկտեմբերյան Սոցիալիստական Հեղափոխության որից, յերբ միլիոնավոր մարդիկ ձեռք բերին իրենց իսկական հարազատ հայրենիքը, որտեղ նրանք պաշտպանվում էին և գնալը ձեռներին պաշտպանեցին բազմաթիվ թշնամիներից։

«Մեզ մոտ հերոսություն մանել է ժողովրդի կենցաղի մեջ։ Մեր յերիտասարդությունը չի թունավորված կոսմոպոլիտական մարդատյաց գաղափարներով։ Մեր յերկրում ոչնչում է գրոլեսարական հայրենասերների մի հզոր բանակ, որի համար չկան սեմատների ամբոցներ, որոնց դա չկարողանար սիրել։ (Ժդանով)։

Անցյալի մի շարք պատերազմներ յեղել են ապացուցելու, որ լեռնային պայմաններում տեղի ունեցող մարտերում հաղթանակը միշտ կախված է յեղել այն բանից, թե պատերազմող կողմերից ով է լավ տիրապետում լեռնային վերելքի և վայրէջքի տեխնիկային և ինչ չափով է նա ծանոթ լեռնային ճանապարհներին։

Ռուս մեծ ժողովուրդն իր հիշողության մեջ խորին հարգանքով է պահպանում խոշորագույն զորավար, ռազմական տեսաբան ու պրակտիկ, բոլշևիկ հայրենասեր Սուվորովի պատկերը։ Նրա զեկավարած ռուսական բանակը չդիմեր պարտություն Ռուսաստանի թշնամիների դեմ մղված մարտերում։

1799 թվի փետրվարին, Անգլիայի և Ավստրիայի ձեռքամբ Ռուսական ՊԱՎԼԻ 1-ին կայսրը, հակառակ իր կամքի և ցանկության, ստիպված դիմեց ՍՈՒՎՈՐՈՎԻՆ, անցնելու զաշտային զորքերի գլուխը, որոնք գնում էին Իտալիա կռվելու Նապոլեոնական զորքերի դեմ։

Ցերեք և կես ամսում նա վոչնչացրեց Նապոլեոնա-

կան մարշալներին և ազատագրեց Իտալիան, վորի նվաճման վրա Նապոլեոնը գործադրել էր մոտ մեկ և կես տարի։

ՍՈՒՎՈՐՈՎԻՆ անապատելիորեն առաջարկում են իր զորքերն շտապ տեղափոխել Ալպյան լեռների վրայով և միանալ Ռիմսկի Կորսակովի զորքերի հետ, Նապոլեոնին մյուս ճակատում էս հարվածելու համար։

Սուվորովը կազմակերպում է ռուսական զորքի հերոսական անցումն Ալպյան լեռների վրայով ձմռան դաժան պայմաններում և հերոսաբար կատարում է իր առաջ դրված խնդիրը։

Նա ամենի ծանր պայմաններում և մեծ հաջողությամբ կրկնում է Հաննիբալի և Կեսարի արշավները։

Հայտնի է Կարթագենի՝ Հին Աշխարհի խոշորագույն զորավար, Իսպանական փոխարքա և Կարթագենի զորքերի գլխավոր հրամանատար Հաննիբալի արշավը, նրա՝ վարը յերկրորդ պունիկական պատերազմի ակզբին (218 թվին) գաբրա գալով Իսպանիայից, անցավ Ալպերի վրայով, և կորցնելով այդ դժվարագույն արշավի ընթացքում համարյա իր զորքի կեսը, իջավ Իտալիա և մի շարք հաղթանակներ տարավ։

Մեծ զորավար Նապոլեոն Բոնապարտը խոտական պատերազմի ժամանակ՝ 1800 թ. Սեն-Բերնարի մոտ մղվող կատաղի կռիվների որերին, ֆրանսիական բանակն անցկացրեց Ալպյան ձյունապատ լեռների վրայով գեպի Իտալիա և խոշոր հաղթանակներ տարավ։

Սակայն, բոլոր հին տիրակալները և խոշոր զորավարներն իրենց բարձրակոչ անցումները կատարել են հազարավոր մարդկանց կյանքի գնով, կանգ չառնելով զոհերի առաջ, զորամասեր լեռնային վերելքի տեխնիկային լավ չեղին տիրապետում, ալպինիզմը դեռևս այնքան էլ տարածված չեր, ինչպես այդ գործով սկսեցին զբաղվել հետագայում։

Ահա թե ինչու այժմ բոլոր բանակներում հատուկ ուշադրություն են դարձնում լեռնային պայմաններում գործելու տեխնիկայի վրա, ահա թե ինչու հատուկ ուշադրու-

թյունե դարձվում ալպինիզմի զարգացման վրա բոլոր յերկրներում։

Ալպինիզմը բացի այն, որ խոշոր ռազմական նշանակություն ունի, մեզ մոտ՝ խորհրդային ալպինիզմը նաև լավագույն միջոցն է աշխատավորների առողջացման համար։

Ալպինիզմը հազարավոր աշխատավորների մեջ դաստիարակում է անվախություն և համարձակություն, որը կազմում է մեր սոցիալիստական հիասքանչ եպոխայի մարդու առանձնահատուկ գիծը։ Սորհրդային ալպինիզմը նրանում է առանձնահատուկ, որ նա մասսայական է, ընդգրկում է իր մեջ հազարավոր աշխատավորներ։ Բուրժուական ալպինիզմն ընդհակառակը՝ ինդիվիդուալիստական է, ունի անհատական բնույթ։ Բուրժուական ալպինիզմը, դա մի խումբ հղփացած բուրժուաների զատարկ ժամանցի միջոց է, լոկ անձնական հաճույքի համար բարձր լեռներում լավ կահավորված հյուրանոցներում, կանոնավոր ճանապարհներով վայրերի դիտում և զբոսանք է։

Ահա ալպինիզմի այն առանձնահատկությունները, որոնց պետք է լավ ծանոթ լինի յուրաքանչյուր սկսնակ ալպինիստ։

III.

ԱԼՊԻՆԻԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բարձր լեռնային տուրիզմը—ալպինիզմը՝ Հայաստանում հանդիսանում է բացառապես Սորհրդային Իշխանության ծնունդ։ 1930 թվականին Հայաստանի Կոմկերիտմիության նախաձեռնությամբ ծնունդ առավ նախկին Պրոլետտուրիզմի ընկերությունը, որն անց և հետագայում դարձավ մի

խոշոր հատարտիսման կազմակերպությունն։ Իր գոյության ընթացքում նա խորը արմատներ գցեց մեր աշխատավորական լայն զանգվածների մեջ։ Մեր յերիտասարդությունը կոլտնտեսականները և գյուղ յերիտասարդությունը շատ սերտ և անքակտելի կերպով կապված են ալպինիզմի հետ։



Ալպինիզմի—լեռնային տուրիզմի սկիզբը մեզ մոտ պետք է համարել 1929 թվականը, յերբ առաջին անգամ փորձ արվեց մեզ մոտ ևս կազմակերպել լեռնային արշավներ։ Դա առաջին արշավներն էին դեպի Արագած սարի գագաթները։ Սակայն ալպինիզմն ավելի սկսեց ծավալվել և մասսայական բնույթ ստանալ միայն 1934 թվականից, յերբ կազմակերպվեց առաջին ասպետական արշավը դեպի Արագած լեռը, և ապա՝ 1935 թվականին, յերբ ալպինիզմի պատմության մեջ առաջին անգամ կազմակերպվեց

հազար հոգու մասնակցությամբ ապագան արշավը դարձյալ դեպի Արագած լեռը, Հայաստանի Լենինյան Կոմունիստական կազմակերպության նախաձեռնությամբ։

Այնուհետև՝ հետագա տարիներին կատարվեցին մի շարք լեռնային վերելքներ դեպի Ազմատանի լեռները, Մայմեխ, Հագիս, Արայի սարը և դեպի Ելբրուս։

Միայն 1934 թվականի լեռնային արշավներին մասնակցել են՝ դեպի Արագած—147 հոգի, և համարյա թե նույն քանակությամբ դեպի մյուս լեռները՝ դեպի Հագիս, Մայմեխ, Ազմատան և այլն։ 1935 թվի ապագան արշավին մասնակցել են 1450 հոգի, նույն՝ 1935 թվին առաջին անգամ ձմռան պայմաններում, (նոյեմբեր ամսին) Արագած բարձրացան 10 համարձակ ալպինիստներ, որոնք դժբախտաբար վողբերգական վախճան ունեցան։

Հայաստանը լեռնային երկիր է, և ալպինիզմի զարգացման համար մեզ մոտ կան խոշոր հեռանկարներ։ Մեր երկրի 4/5 մասը բարձր է ծովի մակերևույթից ավելի քան 1000 մետր։

Արագածն իր սքանչելի լեռնային տեսարաններով և հովիտներով, Զանգեզուրի լեռները, Լոռին՝ առատ բուսականությամբ և գմայլիչ լեռնային պանորամայով, Մայմեխը, Հագիսի և Քյոթանդաղ լեռները կոտայքում ստեղծում են լեռնային տուրիզմի—ալպինիզմի զարգացման համար մեծ և փայլուն հեռանկարներ։

Սակայն Հայաստանի տուրիստական—ալպինիստական ամենաաշքի ընկնող և արժեքավոր որսերկրն է հանդիսանում Արագած սարը։ Ամեն տարի թե ձմռան և թե ամառվա ամիսներին հարյուրավոր երիտասարդ տուրիստներ—ալպինիստներ վերելք են կատարում դեպի

Արագածի 4 գագաթները։ Արագածը գրավում է ալպինիստներին ոչ միայն իր հարուստ լեռնային տեսակներով, հանքային նյութերով, այլ նաև ձոխ բուսականությամբ, բազմազան ծաղիկներով և ընության լեռնային անզուգական գեղեցկությամբ։

Ահա Ծաղկաձորից սկսվող հավիտենական ձյունաշերտերը, ալպիական գեղեցիկ լճերն ու լճակները շրջապատված լեռներով, կանաչամեջ հովիտներում, հին սարդարների հետքերը, հանքային աղբյուրները, պատմական հուշարձանները։ Պատահական չէ, որ դեռ հին ժամանակներից մինչև մեր օրերը Արագածը գրաված է ժողովրդական գրականության, հիացմունքի և սիրո առարկան։

Արագածը բարձր սեղ է,
Ջուրը հիմանդի գեղ է։

Ցերգեր են հորինել նրա մասին ժողովրդական դուդուկները, պատմել նրան շինականի գարդն ու ցավը և հանգստություն փնտրել նրա փեշերին, Մանթաշի ձորերում, նրա կանաչ լանջերին, և գտաշունչ գագաթներին։

Մեր ժողովրդական բանաստեղծ Ամերիք Իսահակյանը գրել է.

Ցեռ վոր մեռնեմ ինձ կ՚թաղեք
Ալագյազի լանջերում,
Վոր Մանթաշից հովերը գան,
Վրաս հեվան ու յերթան։

Արագածը յերգել է Աշուղ Ջիվանին, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը և ուսվելապես ինքը՝ նրա սորոտում ապրող բուն ժողովուրդը։

Արագածը լինելով Սորհրդային Հայաստանի ամենաբարձր լեռը՝ իշխում է Ծնացած բոլոր բարձրությունների վրա։

Արագածն իր տեղն ունի նաև մեր յերկրի անցյալ պատմության մեջ։ Արագածի վրայով են անցել նրան տիրելու նպատակով հին Արևելքի բազմաթիվ տիրակալներ։

Ահա խալդական, Ուրարտուի յերկրի թագավոր Արգիշտին։ Վանի հռչակավոր տիրակալը։ Հին Արևելքի առաջնակարգ նվաճողներից մեկը։ Նա նվաճեց նաև Ծրիաինի (Արագած) յերկիրը։

Մեծ Արգիշտին իր առաջին ուշադրությունը դարձրեց Արագած լեռան վրա, վորի հարավային ստորոտները, մանավանդ ներկայացնում եյին մի գեղեցիկ և արգավանդ յերկիր։ Այդ յերկիրը, վորը հայկական աշխարհագրության մեջ հայտնի յե «Արագածոտն» անունով, Արգիշտին իր անունով ել կոչեց Արգիշտինա և հետագայում, յերբ հիմք դրվեց այդտեղ Արգիշտիխինիլի (Արմավիր) քաղաքին, վերջինս դարձավ այդ գեղեցիկ յերկրի կենտրոնը։ Քասախ գետի հովտում գեռ այսոր ել յերևում են նշանավոր հին բերդեր և ժայռերի մեջ փորված տներ (Անբերդ և Բյուրական)։

Արգիշտին Քասախ գետի հովտով և Ապարանի ուղով հասնում է Արագածի հյուսիսային ստորոտին և նվաճում է այնտեղ Գուլիանի յերկիրը (այժմ Ղուլիջան)։ Հին Արևելքի նվաճողները շատ լավ գիտեյին, վոր նվաճելով Արագածի հյուսիսային և հարավային ստորոտները կարելի յե ամուր կերպով հաստատված լինել Արաքսի հովտում։ Արգիշտին, իր ռազմական ծրագիրը գլուխ բերելուց հետո, մատավ մյուս նշանավոր լեռնանցքը, վորն Արաքսի հովտից Զանգվի հովտով տանում եր դեպի Գուր գետի հովիտը։ Այդ մասին Արգաքլու գյուղի մոտ գտնվող արձանագրության մեջ ասված է. «Մեծ Արգիշտին ասում

և խալդեացիներին,— յեռ նվաճեցի Կիլիքիոնի քաղաքները, յերկիրը բաժանեցի Իշտեկունի քաղաքից, յերկիրը՝ վրը կոչվում է «Լճային»— այս արձանագրությունը գրված է արտեից մոտ 3 հազար տարի առաջ։

Արտաշի մոտով են անցել առաջական մեծ ուղիները Հայաստանի քաղաքներին— Վաղարշապատ, Դվին, Ցերևանի վրայով և ուղղվել համաշխարհային արտոնյալ առևտրի քարավանային ճանապարհը։ Հռոմեական լեգեոնները՝ Լուկուլլոսի, Պոմպեոսի, Անտոնիոսի, Մարկոս Ավրելիոսի, Հերակլ կայսեր բանակները ամբոխներ գրծելով անցել են Արտաշի փեշերով և գնացել տիրելու Արևելքը։

Անա 13-րդ դարի սիրակալներ Զաքարե և Իվանե յեղբայրները։ Նրանք նվաճեցին «Երակիա» յերկիրը և Արտաշի արևելյան կողմում, մի բարձրունքի վրա ամրացրին անառիկ Անբերդ ամրոցը։ Նրանք լավ գիտեին, որ տիրել «Երակիային» (Արտաշին) նշանակում է տիրել Արարատյան և Ելիրակի գաշտերին, որոնք հարստության անսպառ շտեմարան են ներկայացնում։ Այդ մասին մի արձանագրության մեջ գրված է. «Ի Ոնթ թուականութիւնս Զաքարե ամիր ապասալար հայոց և վրաց, որդի մեծին Սարգսի առի զանառիկ ամրոցս Անբերդս յաղթանայծին որդոցն հաքարուս և այլն։

Զաքարին ամեն կողմից ամրացնելով Արտաշը, իր յեղբոր Իվանեի հետ շինում է նրա հյուսիս—արևմտյան առորոտում Հռոմեա ամրոցը և գանքը, որը պահում է Մանթաշի ձորի բերանը։

Մալդերի ճանապարհը համանական է, որ յեղել է Արտաշի արևելյան առորոտով Ապարանով՝ Գառանի հոյ-

ասել, փորը սկիզբն է առնում Արագածի հյուսիսում և պատելով նրա արևելյան կողմից գնում է հարավ և Սև ջրի հետ թափվում է Արաքսի մեջ։ Այսպիսով՝ Քասախը հանդիսանում է բնական և ամենահարմար հաղորդակցության ճանապարհը Արաքսի հովտից մինչև Արագածի թիկունքը։ Այդ միևնույն ուղղությունն ունի և ներկայումս գյուղերն անցնող խճուղին՝ Վաղարշապատից Աշտարակի վրայով դեպի Ապիտակի լեռնանցքը, փորով և պարզվում է նրա հին ծագումը*)։

7-րդ դարում Արաբական հրոսակները վազեցին Արագածի շուրջը։ 11-րդ դարում նրանց փոխարինում են թուրք—սելջուկների արշավանքները։

Սելջուկներից հետո 13-րդ դարի առաջին կիսում վառնակոխ անելով բարգավաճ հովիտները, յեկան մոնղոլ-թաթարական բռնակալները։ ապա հայտնի յեն 14-րդ և 15-րդ դարերում Լենկթեմուրի արշավանքները և այլն։

Արագածը դեպի իրեն է դրավել բազմաթիվ հետազոտողների, պատմաբանների և աշխարհագրագետների։

Հայտնի գիտնական Մ. Վաղները 1843 թվականին՝ հուլիս ամսին ուսումնասիրության նպատակով Արագած բարձրանալիս, Արագածի լանջերի գեղեցկությունից աքանչացած գրում է, որ «Արագածի մեծ դարատափից Ապարանի լայն հովտի բացվող տեսարանը վերին աստիճանի նկարագեղ էր։ Արագածի գեղեցիկ տեսարանները այնքան եյին հմայել նրան, որ, Արագածից ցած իջնելիս նա ասելացնում, թե՝ «Այդպիսի մի սիրուն, անեղ յեզ վայրենի պատկերից բաժանվելն, ինձ համար դժվար յեղավ-

*) Տես՝ „Արագածը պատմության մեջ" եջ 28։

յեռ իմ ուղեկիցներին «թեմն ուղարկելց հետո յերբ-
կար ժամանակ այդ նկարչական գիրքը քննեցի, վորն ար-
ժանի յեր մի համառ վարպետի վրձինի, իմ հայրենակից-
ներին ներկայացնելու համար, վորոնք չեն կարող ան-
ձամբ Հայաստան գալ ճանապարհորդելու։*)

Մի ուրիշ տեղ Վաղները գրում է։ «Ալպյան յերկիրներ-
ի մեջ Հայաստանում Արարատի մեծ դարատափը շատ
դեղեցիկ է։ Կովկասի մեջ չկա մի ուրիշ տեղ, վոր ծա-
դիկների պերապետությունով յեվ շատությունով, ագրյուր-
ների առատությունով յեվ ամառային ոգի քաղցրու-
թյունով հավասար լինի Արարատին։»։

Այս վիթխարի հսկայական հրաբխային մասիվն իր
դեղատեսիլ պատկերով, վերին ասիճանի հարուստ բը-
նությամբ, առողջարար ոդով յեվ քաղցրահամ ջրերով
միշտ գրավել է ամենքին։ Հեղինակավոր բիոլոգ ակադե-
միկ Աբիխը Արարատի մասին գրելիս, ասելացնում է,
վոր—«Արարատը գանագանվում է Հայաստանի յեվ Փո-
քրը Ասիայի իր նման լեռներից, յեվ վոր նրա առանձնա-
հատկություններին շնորհիվ է, վոր նա ստացել է առան-
ձին ազգագրական նշանակություն, լինելով իբրև կենտ-
րոնատեղը յեվ որքան հայ ժողովրդի նրա բնության
բանաստեղծական տեսարաններին, վորոնցով դեռ 1500
տարի առաջ Մովսես Խորենացին արդարացրել է Հայաս-
տանի հիանալորությունն Արարատի վրա, ավելացել են մինչև որա
անվերջանալ։

Կովկասի հայտնի կարտոգրաֆ Ա. Պասուխովը 1893
թվականի հունիս ամսի 25-ին Արարատի գագաթը բարձ-

* Մ. Վաղներ «Ճանապարհորդություն ի Հայաստան», յերես 111, բատ գերմանագ. Հովհ. Կարապետյանի գրքի։

բանալուց հետո գրում է. «Առավոտյան ժամը 8-ից 16 բոպե անց մենք հասանք ամենաբարձր գագաթին, որի բարձրությունը հավասար է 13, 167 վոտնաչափի (4096 մետրի), այսուհետև մեր աչքի առաջ պատկերացավ մի վեհագույն տեսարան ...»։

Արագածը իր բոլոր յերկրաբդական հրաբխային կենտրոնների հետ միասին ներկայացնում է մի հսկայական կոնաձև լայնատարած հրաբխային մասսիվ, որն իր բարձրությամբ, թե Հայաստանի յեվ թե Անդրկովկասի ու Խորհրդային Միության սահմանների մեջ գտնված լեռների հետ համեմատած առաջին տեղն է բռնում։ Նրան կարելի յե դասել աշխարհի ամենամեծ հրաբուխների շարքում*)

IV.

ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐՇԱՎՆԵՐ

Ինչպես նախորդ գլխում հիշատակել ենք, Հայաստանում լեռնային արշավները սկսում են կազմակերպվել 1929 թվից։ Նախկին Խորհրդային պրոֆմիության վարչության կողմից կազմակերպվում են արշավներ դեպի Արագածի գագաթները 1929 յեվ 1930 թվականներին։

Այնուհետև յերբ, 1930 թվականին կազմակերպվում է նախկին Պրոլետարիատի Ընկերությունը, այդ արշավների կազմակերպման յեվ ղեկավարման գործով սկսում է զբաղվել վերջինս, ստեղծելով իրեն կից լեռնային սեկցիա Սասուր Սասորյանի, գեոլոգ Հ. Կարապետյանի,

*) Մեջբերումները ըստ գեոլոգ Հովհ. Կարապետյանի «Արագած լեռը» գրքի եջ 8-9։

Վ. Դարյանի յուր մի քանի ուրիշ ընկերների մասնակցությամբ։

Անհետևան այդ լեռնային արշավները կրում են կազմակերպված բնույթ, ստեղծվում է խոշոր հասարակայնություն յուր լեռնային արշավների մեջ և ընդգրկվում խոշոր թվով մերիատարգություն՝ բանվորներ, գյուղացիներ, որոնք սիրում են ալպինիզմը յուր մեծ ոգևորությամբ սկսում են զբաղվել ալպինիզմով—լեռնային տուրիզմով։

Մինչև 1930 թվականը ևս Հայաստանում կատարվում էին զանազան կազմակերպությունների կողմից լեռնային արշավներ, սակայն նրանք կրում էին պատահական բնույթ, լեռնային տուրիզմին ծանոթ մի քանի ընկերների նախաձեռնությամբ։

Այսպես՝ դեռ 1925 թվականին, Հայկական հրաձգային գնդի հրամկազմից 5 հոգի, սկսած ոտքի, բարձրանում են Արագածի հյուսիսային գագաթը (4096 մետրի)։ Վերելքը կատարում են ձիերով մինչև ձորը, վերը սորտից մինչև գագաթը տանող ճանապարհի կեսից մի քիչ բարձր են։ Գագաթին խումբը կանգնեցնում է կարմիր դրոշակ յուր թիթեղյա տանի մեջ թողնում և մի գրություն վերելքի արվա մասին։

Իսկական մասսայական ալպինիզմը Հայաստանում սկսում է զարգանալ միայն 1934 թվականից, երբ 147 հոգի բարձրանում են Արագածի, այնուհետև Մայմեխա, Հաղբատ և մյուս լեռները։ Սա Հայաստանի ալպինիզմի մասսայական զարգացման առաջին տարին է։ Սա առաջին ստուգման արշավն էր, որը կազմակերպել էր նախկին

պրոլետարիատի ընկերությունը դեպի Արագածի գագաթները։ Հայտնի է, 1935 թվականի հոգտրի առաջին արշավը դեպի Արագածի գագաթները, որը Հայաստանի ալպինիզմի զարգացման պատմության մեջ կենաց, որպես մեր ուրերի յերիտասարդության հերոսության ու խիզախության փայլուն որինակ, որի նախաձեռնությունը պատկանում եր Հայաստանի Լենինյան Կոմյերիտմիությանը։ Այդ արշավին մասնակցում եյին 156 կին։

Ապա՝ 1935 թվականին կատարվեց Հայաստանի լավագույն ալպինիստների արշավը դեպի Կոմկաշի ձյունապատ հսկա Ելբրուսի գագաթը, նվիրված մեր սքանչելի խորհրդային հանրապետության, Հայաստանի Խորհրդայնացման 15-ամյակին։ Այդ արշավը, որն անցավ շատ հաջող, Հայաստանի ալպինիզմի պատմության մեջ խոշոր տեղ է գրավում։ Այդ արշավով ստեղծվեց ալպինիստների մի նոր կազմ, որն այսոր պատվով կրում է Խորհրդային Միության ալպինիստի կոչումը և կրծքանշանը։

Ինչպես հայտնի է, կոմունիստական (բ) կուսակցությունը և խորհրդային կառավարությունը բարձր գնահատելով Ելբրուսի արշավի մասնակիցների կատարած աշխատանքը նշեցին այդ բարձր պարգևներով—Պատվոգրերով և մի շարք այլ պարգևներով։ Այնուհետև՝ նշանակալից է 1936 թվականի և 1937 թվականի Ապարանի կոլտնտեսական ալպինիստների արշավը գահուկներով ձմռան դաժան պայմաններում, Թաքալու գյուղի գահուկավոր՝ ալպինիստ Աբաս Խալաթյանի մասնակցությամբ։

Այդ ընկերները նույնպես արժանացան պարգևների։ Նրանք Արագածի գագաթին կարմիր դրոշ դրեցին։ Չենք ուզում ծանրաբեռնել այս ակնարկը մանրա-

*) Ծան. հեղինակի. Արագածն ունի 4 գագաթ։

ման նշելով այն բոլոր աշխատանքները, որոնք կատարվել են վերջին տարիների ընթացքում դեպի մեր լեռները առանձնապես վերջի Արագածը։

Լենինականի, Աբթիկի, Ապարանի, Բյուրականի, Վազաշատի, Հոկտեմբերյանի մի շարք լավագույն լեռնային տուրիստներ ամեն տարի նույնիսկ ձմռան դաժան պայմաններում դահուկներով մի քանի անգամ բարձրացել են Արագածի գագաթները և ամեն ժամանակ այդ վերելքները կատարվել են մեծ հաջողությամբ։

Վերջին տարիների ընթացքում մեր մի շարք շրջաններում առաջացել են լեռնային տուրիզմի—ալպինիզմի լավագույն կադրեր, ենթաստիաններ, որոնց թիվը հասնում է հարյուրների։ Սակայն շատ վատ է դրված յեղել այդ կադրերի գաղափարական, անհրաժեշտ ալպինիստական գիտելիքներով զինելու գործը։ Նախկին զբոսաշրջիկներ կիրց գործող լեռնային սեկցիան, որը զբաղվել են պատահական մարդիկ յեղել և մի ինքնամփոփ կազմակերպություն և լայն մասսայական աշխատանք չի կատարել։ Լեռնային տուրիզմը սկսող մեր հարյուրավոր ընկերների մեջ, միանգամայն կտրված է յեղել շրջաններից։

Լեռնային սեկցիայի աշխատանքների սխալ դրվածքի և մոչ ճիշտ զեկավարման շնորհիվ է, որ տեղի ունեցավ 1933 թվականի Արագածի այն վթարը, որը ծանր հարված հասցրեց Հայաստանի տուրիստական կազմակերպությանը և վերջին յերկու տարվա ընթացքում ալպինիստական շարժումը որոշ փակուղու մեջ ընկավ։

Դա՝ Հայաստանի Խորհրդայնացման 15-ամյակին տուրիզմ կազմակերպված առաջին ձմեռային լեռնային արշ-

շամբ եր գեպի Արագածի գագաթը։ Ալպինիզմի 10 յերիտասարդ ենտուզիաստներ, համակված հեղափոխական բարձր տրամադրությամբ գեպի Արագածի ձյունապատ գագաթն եյին բարձրացնում մեր սիրելի առաջնորդ ընկեր Լենինի կիսանդրին, որով ցանկանում եյին հավերժացնել մեր հանրապետության 15-ամյա տարեդարձը և ցույց տալ իրենց անհուն սերն ու նվիրվածությունը գեպի մեր սքանչելի սոցիալիստական հայրենիքը։

Այս բարձր և խոշոր գագափարը փորձան փոգնորում եր 10 յերիտասարդ ալպինիստներին, նուլնքան անպատասխանատու և անփույթ վերաբերմունք ցույց տվին գեպի այդ արշավը Հայաստանի պրոլետարիատի նախկին գեկավարները։

1935 թվականի հարարի առաջին արշավը գեպի Արագած, թեպետ հաջողությամբ պսակվեց փոշ թե նրա համար, որ ալպիզմի գեկավարները շատ լավ եյին կազմակերպել գործը, այլ նրա համար, որ այդ արշավի կազմակերպման մեջ խոշոր աշխատանք եր կատարել Հայաստանի կոմյերիտմիությունը յեվ ալպինական ակտիվը։ Այդպիսի պատասխանատու արշավ, ինչպիսին հարարի արշավն եր, կարող եր նույնպես վտանգավոր վախճան ունենալ, յեթե բնությունը չնպաստեր։ Բացառիկ լավ յեղանակները Արագածի վրա նպաստեցին, որպեսզի արշավը հաջող անցնի։ Այն ժամանակ, յերբ յեղանակների փոփոխությունը, Արագածի լանջերին մենք չունենք պատսպարվելու յեվ փոշ մի ապաստան, բազմամարդ արշավներ հանել գեպի Արագածի գագաթը, միանգամայն պատասխանատու գործ է և անմտություն։ Հայաստանի ալպինական կազմակերպությունն իր ժա-

մանակին տակՉ չմոռց Արագածի լանջերին ոթեվաններ կազմակերպելու խնդիրը, որը լուրջ խոչընդոտ է հանդիսանում հետագայում մեզ մոտ մասսայական ալպինիզմի զարգացման համար։ 1935 թվի ձմեռային արշավի տխուր փախանքը ցույց տվեց, որ Արագածի լանջին ոթևան լինելու դեպքում մենք խոշոր չափով ոժանդակած կլինենք լեռնային տուրիզմի-ալպինիզմի զարգացմանը և կանխած կլինենք բոլոր դժբախտ դեպքերը։ Նման ոթեվաններ կառուցված են Կովկասի և Միությանմի շարք ձյունապատ լեռների լանջերին։ Մեզ մոտ ևս այդ խնդիրը դրվել է, բայց մինչև որս գործնական լուծում չի ստացել։

Համամիութենական կենտգործկոմի 1935 թվի որոշմամբ պրոլետարական տուրիզմի և եքսկուրսիաների ընկերությունը վերացվեց, իսկ նրա ֆունկցիաները հանձնվեցին պրոֆկազմակերպություններին։ Ալպինիզմն անջատվեց և այդ գործի ղեկավարությունը հանձնվեց ԺԿՄ-ին կից ֆիզկուլտուրայի և սպորտի գործերի կոմիտեին։ Այդ բաժանումով, թե՛ տուրիստական աշխատանքները ավելի լայնացվում են և ծավալվում և թե՛ ամրապնդվում է ալպինիզմի նյութական բազան և լեռնային տուրիզմը ոգտագործվում է որպես աշխատավորության հանգստի կազմակերպման լավագույն միջոցներից մեկը։

V.

ՄԵՐ ԱՐՇԱՎՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մեր լեռնային արշավները, որոնք կատարված են դեպի Հայաստանի լեռները յուր դեպի Ելբրուս ամեն ժամանակ դիտական -հետազոտական նպատակներ չեն հետապնդել։

Այդ արշավներից շատերը կրել են միակողմանի, սուբյեկտիվ բնույթ։ Սա յուր տեսակետից եմ միայն լեռներն ուսումնասիրելու հետազոտելու սեռակետից։

Անշուշտ, այդ արշավների ընթացքում մեր սուբյեկտիվ տեսությունը խոշոր գործ է կատարել մասնիկից ծանոթանալով մեր սոցիալիստական հայրենիքի կառուցումներին, կոլտնտեսական մեծ աշխատանք է կատարել մեր կոլտնտեսականների հետ ունեցած մի շարք հանդիպումների ժամանակ, գրականության բերքահավաքի կապակցությամբ։

Երբեք ծանոթացել են Հայաստանի պատմական վայրերի հետ այդ մասին գրույց կազմակերպելով գյուղերում և այլն։ Այդ խնդրում խոշոր ծառայություն է մատուցել նախկին ՈՊՏԵ-ին կից կազմակերպված գիտական խորհուրդը, որին մասնակցել են մեր լավագույն գիտական աշխատողները։ 1936 թվականին արձակի խորտրում գիտելու նպատակով կազմակերպվեց մի լեռնային արշավ դեպի Հաղբատ տարբեր տարածքից սուբյեկտները գիտեցին արձակի խորտրումը։ Վերջերի նախորդյակին արշավի մասնակիցները կազմակերպեցին գիտական գրույց Զառ գյուղի կալանավորների համար արձակի խորտրման մասին։

Գիտական խոշոր աշխատանք է կատարված Արագածի լեռնային արշավների ժամանակ։ Այդ արշավների ընթացքում խոշոր տեղ է տրվել Արագած տարի ուսումնասիրությանը։ Այսպես՝ այդ արշավների մասնակիցների առաջ դրված են յեղել հետևյալ խնդիրները.

1. Բազմակողմանիորեն ուսումնասիրել Արագածի սուբյեկտիվ մարշրուտները յեվ օբյեկտները։

2. Ճշտել հանքային աղբյուրների ցուցակը։

3. Հշտել ծծմբի հանքերի առկայությունը և նրանց օգտագործման հեռանկարությունները։

4. Հշտել Արագածի գագաթների ձորերի, հեղգաստների լճակների անգնահատելի մնայնակությունները։

5. Անվանակոչել Արագածի մեծ ջրվեժը և պարզել նրա օգտագործման հեռանկարությունները։

Բացի դրանից մարշրուտներին մասնակցող առանձին խմբակներն ուսումնասիրել են Արագածի բուսական գոնաները, բույսերի տեսակները, քոչվորական կյանքը, խառնարանի հավիտենական ձյունը, հին սառցադաշտերի հետքերը և այլն։

Առաջադրված այդ խնդիրները թեև կատարված են, բայց այդ աշխատանքը լիովին չի հաշվի առնված և արձանագրված։ Մինչ վերարերում է մարշրուտների խնդրին, սա ամենադրական և ամենաարժեքավոր աշխատանքներից մեկն է, որը կատարված է Արագածի արշավների ընթացքում։ Այսպես՝ հայտնաբերված և ճշտված են հետևյալ մարշրուտները։

1. Բաշ—Ապարանից դեպի հյուսիսային գագաթը—խառնարան և վերադարձ Ղազանչիի վրայով։

2. Աբթիկից դեպի հյուսիս—արևելյան գագաթը խառնարան յեվ Ղազանչիի վրայով վերադարձ։

3. Բյուրականից Սևվ լճի վրայով դեպի Արագածի հարավ - արևելյան գագաթը, այնտեղից խառնարան և Ղազանչիի վրայով վերադարձ։

4. Ղազանչիից դեպի խառնարան և հարավ—արևելյան գագաթը և Սեվ ու ԲԱԴՈՒ լճերի վրայով վերադարձ Աբթիկ։

Այնուհետև խոշոր արժեք է ներկայացնում Արա-

գածի վրա ընկած մի շարք անանուն օբյեկտների անվանակոչումը, որի մասին մենք ունենք Հայկական ԽՍՀ Կենտգործկոմի 1934 թ. հոկտեմբերի 17-ի որոշումը։

Նկատի ունենալով Արագածի շուրջն ստեղծված խաղաղ հետաքրքրությունը և յուրաքանչյուր հետագայում կազմակերպվելիք արշավների հաջողությունն ապահովելու անհրաժեշտությունից, Հայկական ԽՍՀ Կենտգործկոմը հարգելով նախկին ՈՊՏԵ-յի մինչհեղափոխությունը հաստատեց հետևյալ անանուն օբյեկտների անվանակոչումը։

1. Արագածի գլխավոր խառնարանից դեպի Ղազնաֆարի ձորը (Գեղհովիտ) հոսող յերեք ջրվեժներն անվանակոչել. ա) ՎԵՐԻՆ, բ) ՄԻՋԻՆ, գ) ՆԵՐՔԻՆ։

2. Հյուսիսային գագաթից հոսող (Քաղցր ջրի հովտում) ջրվեժն անվանակոչել «Տուրիզմիզ» անունով։

3. Արագածի Ե-րդ ամենափոքր գագաթի ներքև յեղած տասը լճակների (2 մեծ և 8 փոքր) հովիտն անվանակոչել՝ «ԼՃԱԿՆԵՐԻ ՀՈՎԻՏ»։

4. Շիրակալայի և Ղազնաֆարի մեջտեղ գտնված Լուսաղբյուրի մոտիկ բերդն անվանակոչել՝ «ԼՈՒՍԱԲԵՐԴ»։

5. Ղազնաֆարի հանդիպակած բարձունքների վրա գտնվող անանուն լիճը, որին տեղացիները կոչում են լճում խեղդված Ամրոյի անունով, ընդառաջելով ԽՍՀՄ-ի գիտությունների Ակադեմիայի բրիգադի ցանկությանն անվանակոչել՝ «ԼԵՄՍԻՆԳ ԼԻՃ»։

6. Ղազնաֆարի կամ Գալիչայի հովիտն անվանակոչել համաձայն Շոպենի հիշատակության—«ԳԵՂՀՈՎԻՏ»։

7. Տուրիզմի ջրվեժի հովիտն անվանել՝ «ՔԱՂՑՐ ՋՐԻ ՀՈՎԻՏ», (նկատի ունենալով այն, որ տեղացիները հոսող ջուրն անվանում են Քաղցր ջուր)։

Խոշոր գիտական արժեք և ներկայացնում 1934 թվի ասպետների արշավի ժամանակ մարշրուտի գեկավարներից մեկի հայտնաբերած նշանագրերը Արարատի վրա, Բազուլեի մոտ, որոնք գիտական և պատմական մեծ նորություն են։

Իսկապես հետազոտում պարզվեց, այդ նշանագրերը (այծագրերը) պատկանում են Հայաստանի այլ վայրերում և Արարատի մյուս մասերում հայտնաբերված այծագրերի խմբին և ունեն շատ կարևոր պատմա-հնագիտական նշանակություն։ Մի քանի գիտական աշխատողների ցեղակցությամբ այդ նշանագրերը մինչև այժմ հայտնաբերված նախահայկական նշանագրերի մեջ համարվում են ամենահինը և հայտնաբար հետազոտում կատարելագործվելով վերածվել են այծագրերի։ Այդ հայտնաբերումը ուշադրություն արժանացավ Հայկական Կուլտուրայի Պատմության ինստիտուտի կողմից։ Ինստիտուտը 1934 թվականին, հունվարի 3-ի նիստում հաստատեց, որ այդ հայտնաբերումը գիտական մեծ արժեք ունի։ Այդ առթիվ ինստիտուտի վարչության մեջ ասվում է։ 1. Հատուկ գիտական էքսպեդիցիա ուղարկել այծագրերի հայտնաբերման վայրը։ 2. Մինչև հիմա հայտնաբերված այծագրերի հետ միասին այս նոր այծագրերը ևս հրապարակել։ Քարտեզի վրա յոթ անցկացվել Արարատի 5-րդ պատվերը, որը մինչև հիմա նշանակված չի եղել։ Ինչպես նկատել և նաև ԽՍՀՄ-ի Գիտությունների Ակադեմիայի բրիգադը, որը լուրջ ուսումնասիրություն է յենթարկել Արարատը։

Արարատի լեռնային ասպետական արշավների և մի շարք այլ արշավների ժամանակ ցեղերը այցելել են պատմական վայրեր, ուսումնասիրել և ծանոթացել են այդ վայրերի պատմության հետ։ Այսպես, նրանք այցելել են՝ Լուսա-

բերդը, փոքր գանձուժ և Ղազնափար և Շիրազալա գյուղերի միջև։ Վիշապների բլուրը (Ղըզլըգիարեթ), փորի վրա յեն գտնվում հին հեթանոսական պաշտամունքի տարիքներից վիշապները։ Ամառի բերդը—Ղազնափար և Թաքալու գյուղերի միջև։ Համբերդը՝ միջնադարյան Հայաստանի նշանավոր բերդերից մեկը։ Արխաշենի ջրանցքները։ Ախթամար բերդը՝ Վասպուրական գյուղի մոտ։ Նախաուրարտական բազմաթիվ արձանագրություններ և այլն։

Բացի այդ բոլորից, համապատասխան մանագիտությամբ գրագիտները հավաքել են քարեր, բույսեր, դեղաբույսերի հավաքածուներ։ Նյութեր ՀՍՍՀ աշխարհագրության և լեռնագրության գաղափարման գծով և բազմաթիվ մի շարք այլ ուսումնասիրություններ։ Այսպիսով՝ մինչև հիմա մեր աշխատավորության լայն մասսաներին անծանոթ Արագածը դարձել է այժմ երանց ամենասիրելի տուրիստական վայրերից մեկը*)։

VI.

ԴԵՊՔ ԼԵՌՆԵՐԸ

Արևելյան Հայաստանի միջով անցնող հսկայական լեռների շարանը սովորաբար կոչվում է Փոքր Կովկասյան լեռնաշար կամ Անտիկովկաս։

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության հյուսիսից ձգվող լեռնաշարն սկսվում է Ջավով կամ Մթին լեռների շարունակությունը կազմող Կարախաչի լեռնաշղթայի Լեյլի լեռնագագաթից (3202 մետր)։ Այդ լեռնաշարը հարավային և ապա զուգահեռական ուղղությամբ ձգվելով հասնում է Արաքսի ափերին կամ Իրանի սահմանին։

---

*) Մեջբերումներն քան Արագածի ատոզանի աբշավի ժողովածուի եջ 6—7։

Փ. Կովկասի կամ Հայկական լեռնաշղթի ընդհանուր երկարությունը կլոր թվով մոտ 500 կիլոմետր է։ Նա ունի բազմաթիվ մանր ու մեծ ճյուղավորություններ, որոնք տեկտոնիկ ծագում ունեն և միանում են հրաբխային ծագում ունեցող վիթխարի զանգվածների հետ։

Այս լեռնաշղթի լեռնագրության ընդհանուր հարմոնիան լրացնում են առանձին կանգնած հրաբխային հսկաներ և բազմաթիվ մանր ու մեծ գագաթներ, բլուրներ ու բարձրություններ, որոնց խոշորագույն մասին դեռ չի դիպել ալպինիստի վոտքը։ Հայկական լեռնաշղթի գեղեցիկ կոլորիտը լրացնող համեմատաբար մանր շղթաներն ու գագաթները հետաքրքրական ու հարուստ նյութ կարող են դառնալ ավելի մանրակրկիտ ուսումնասիրության համար։

Ալպինիստական արշավները պետք է դառնա այդ հետաքրքիր գագաթների աշխարհագրական, երկրաբանական, բուսաբանական և պատմական ուսումնասիրությունը։ Մենք մինչև հիմա մեր ուշադրությունը բևեռել ենք միայն Արագածի վրա։ Այժմ Հայաստանի ալպինիստների հետաքրքրության ու ուշադրության կենտրոնը պետք է դառնան Փոքր-Կովկասի կամ Հայկական լեռնաշղթի վրա գտնվող մյուս գագաթները։ Ահա այդ հոյակապ լեռնաշղթը, որն սկսվում է հյուսիսից Կարսաչի լեռնաշղթայով՝ 20 կիլոմետր երկարությամբ, իր Լեյլի (3202) լեռնագագաթով։ Ապա հաջորդում են միմյանց շարունակաբար՝ Զիբուխլուլի լեռնաշղթան—35 կիլոմետր երկարությամբ, Աղմանդան լեռնագագաթներով (2998 մ.), Բզովդալի լեռնաշղթան—30 կիլոմետր երկարությամբ, Ծպիտակ (2119 մ.), Զախչախ 2370 մ.) և մի քանի ուրիշ լեռնագագաթներով։

Փաժրակի լեռնաշղթան — 85 կիլոմետր յերկարությամբ, փոքր ձգվելով արևմուտքից դեպի արևելք հասնում է Սևանա լճին, ՄԱՅՄԵԽ — (3093), Խալխալ (3165), Թեժ Ահմեդ (3100) և մի շարք ուրիշ լեռնադագաթներով։



Մայդանի լեռները, Արեգունու կամ Շահ-Դաղի լեռնաշղթան, Զանգեզուրի լեռնաշղթան,

որն ամենից յերկարն ու բարձրն է ամբողջ Անդրկովկասում և ասաջնությանը տեղը միայն Մեծ Կովկասյան լեռնաշղթայինն է զիջում։ Նրա յերկարությունը 200 կիլոմետր է։ Նրա ամենաբարձր գագաթը Կապուջդին է, որն իր 3920 մետր յերկնամբարձ պատումով յերկրորդն է Խորհրդային Հայաստանում (Առաջինը Արագածն է)։

Ապա նրա Ղափլան կամ Այչինգիլ գագաթը՝ 3005 մետր բարձրությամբ, Ցաղլուն՝ 3843 մետր, Ղազանդաղը՝ 3858 մետր և այլն։

Ազարայի լեռները, Շիրակի լեռնաշղթան, Արայի լեռը՝ 2610 մետր բարձրությամբ, որը գտնվում է Արագածի հարավ-արևելյան կողմում։ Միսխանայի լեռնաշղթան — Ալիբեկ գագաթով (2860 մ.) և այլ գագաթներով։

Մաղկունյաց շղթան, Ադմաղանի լեռնաշղթան— 80 կիլոմետր յերկարությամբ, որը ձգվում է հյուսիսից—հարավ, Կարմիր լեռ (3104 մ.) Սև լեռ (3146), Ուշթափա (3252) և մի շարք այլ լեռնագագաթներով։

Հարավ-Սևանի լեռնաշղթան — 65 կիլոմ. յերկարություն — Դարալագյազի, Լալվար-Լեջանի, Աղաուերի, Մրղուզի, Շամշադինի, Աբեվիքի, Խուսուսի, Քաջարանցի, Բարքուշատի լեռնաշղթաները։

Հադիսը՝ (2542) Կոտայքում, Քյոթան—Դաղ՝ Ջանտանի մոտ (3211) և այլն։

Անա հայկական կամ փոքր Կովկասյան այն լեռնաշարը, որի վրայով պիտի անցնեն Հայաստանի ալպինիստները ասաջիկա տարիների ընթացքում և յերկրի

հարուստ ընդերքն ի սպաս դնեն մեր սոցիալիստական շինարարության։ ուսումնասիրելով այդ լեռները յերկրաբանական, աշխարհագրական, բուսաբանական, պատմական, ջրերի ուսումնասիրության տեսակետից և այլն։

Նրանք պետք և ուսումնասիրեն լեռնային ճանապարհները, ճշտեն անվտանգության հաշտարարները, հաշտարարները, ճշտեն քարտեզները։ Այդ տեսակետից խոշոր նշանակություն պետք և տալ առաջիկա տարիներում նախատեսված արշավները դեպի Կապուջղ, Արագած, Աղմաղանի լեռները, Մայմեխ, Մխչանայի և մյուս լեռները։

Առանձնապես խոշոր հետաքրքրություն և ներկայացնում Կապուջղը։

Կապուջղը վաղուց և ինչ գրավում և Հայաստանի ալպինիստների ուշադրությունը։ Բայց մինչև հիմա չի հաջողվել լինել նրա գագաթին։ Այդ լեռնագագաթով հետաքրքրվել և և սկսել և նրանով զբաղվել Հայաստանի յերկրաբանական ինստիտուտը։

Այս լեռնագագաթն իր հարուստ հանքային և քարային տեսակներով ուսումնասիրության խորն աղբյուր և հանդիսանում և հսկայական նշանակություն ունի մեր սոցիալիստական շինարարության համար։ Այդ լեռնագագաթի գեոլոգիական ուսումնասիրությունը պետք և կատարեն մեր ալպինիստները։ Սա կլինի խոշորագույն մի գիտական աշխատանք Հայաստանի ալպինիստների համար։

Խոշոր նշանակություն ունի նաև Աղմաղանի լեռների ուսումնասիրությունը։ առանձնապես՝ նրա սառցադաշտերի և ձյունաշերտերի ուսումնասիրությունը։

* *
*

Տարեց-տարի բազմապատկվում և խորհրդային ալպինիստների թիվը, ընդգրկելով քաղաքի ու գյուղի աշխատավորության նորանոր մասսաներ։ Ալպինիզմը՝ ֆիզկուլտուրայի հետ միասին ժողովրդական առողջության մի հզոր պրոֆիլակտիկ միջոց հանդիսանալով, կենցաղի և մարդկանց սոցիալիստական վերափոխման հզոր մի լծակ և, սոցիալիստական շինարարության կուլտուրական և քաղաքական մի խոշոր գործոն, իսկ ալպինիստները՝ մեր սքանչելի սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու համար պատրաստ՝ խիզախ, համարձակ խորհրդային հայրենասերների պանծալի մի բանակ։

Հազարավոր ալպինիստներ քայլում են լայնածավալ Խորհրդային Միության մեջ, ցնծագին և աշխուժ արձագանքելով բնության կանչին, այրվելով ու կոփվելով առողջարար արևի ճառագայթների տակ, դաշտերի ու լեռների մաքուր և թարմ ոգի մեջ, նոր լիցք ստանալով մեր արևոտ, սոցիալիստական հայրենիքի համար մղվող հերոսական պայքարի համար։

ԱՆՀԱՂԹԵԼԻ ԳԱԳԱԹԸ

Հիմալայան լեռների վրա հպարտորեն դեպի յերկինք և խայտալով հակա Եվերեստը նա անհաղթ գագաթ է, նրան չի տիրացել մարդը և մարդկային ոտքը չի տրորել նրա հավիտենական կուսական ձյունը։

Տարիներ շարունակ բազմաթիվ ալպինիստների փորձն և յեղել տիրել Եվերեստը, բայց այդ բոլոր փորձերը անցել են ապարդյուն։

Յերկար ժամանակ աշխարհագրագետներն անգամ չեն իմացել Եվերեստի իսկական տեղը և շփոթել են այն, նույն լեռնաշղթայի վրա գտնվող նրան մոտիկ Գաուրիշանկար գագաթի հետ։

Եվերեստն աշխարհի ամենաբարձր գագաթն է, որն ունի ծովի մակերևույթից 8,882 մետր բարձրություն։ Վերջին 16 տարվա ընթացքում 5 անգլիական պետական եքսպեդիցիաներ փորձ են արել գրոհել Եվերեստը, բայց այդ բոլոր գրոհներն էլ անցել են անհաջող։

Այդ եքսպեդիցիաների մասնակիցներից միայն 14 հոգի նահատակվել են սար բարձրանալիս։ Անգլիական այդ եքսպեդիցիաները գրոհել են Եվերեստը 1912, և 1922 թվականներին, որից միայն վերջինին և հաջողվել հասնել մինչև 8604 մետր բարձրության։

1936 թվին նորից կազմակերպվեց անգլիական մի եքսպեդիցիա գիտական Ռեալեջի ղեկավարությամբ և փորձված ալպինիստների մասնակցությամբ։

Սակայն այս եքսպեդիցիայի մասնակիցները չկարողացան հասնել նույնիսկ այն բարձրության, որին հասել էին 12 տարի առաջ կազմակերպված եքսպեդիցիայի մասնակիցները։ Այն ժամանակ ալպինիստներին հաջողվել էր հասնելու մինչև գագաթը միայն 200 մետր։

Վերջին եքսպեդիցիայի զեկուցումը Ռեուլենը հրաժարվել է հեռագրում այլևս որևէ փորձ կատարելու Եվերեստի գագաթը հասնելու համար։

Գլխաւոր խմբագիր՝ Դր. ՍԻՆԱՆՅԱՆ

8728

Գլավլիտի լիտոգր 16036· Պատվեր № 209·
Տիրաժ 1500.
Թուղթ 62×27· Տպ. 3 մամուլ.
Տրված է արտադրության 5 մարտի 1938 թ.
Տրված է տպագրության 30 ապրիլի 1938 թ.
Գինը 1 ռ. 50 կ.

Ցեղական տիրապետության Հայաստանում-ի Հր. տպարան

ՀԱՍՀ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0006785

268
ԳԻՆԸ 1' Ռ. 50 կ.
II
А 20748

В. ДАРЬЯН

Альпинизм в Армении.

Издание комитета по делам физкультуры
и спорта при СНК Арм. ССР.

год. 19